ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

14.10.2024թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին

Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Գ.Քարհանյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բաղդասարյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բեջանյանը, Մ.Սարգսյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝
Ընթացիկ հարցեր

Ելույթ ունեցան՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց մի շարք հանձնարարականների կատարման վերաբերյալ իր նկատառումները, մասնավորապես ս.թ. մայիսի 25-26-ին տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով Աղետի գոտում ֆիզիկական անձանց բնակելի տների և տրանսպորտային միջոցների փոխհատուցման հարցերին, սուբվենցիոն և պետության պատվիրակությամբ իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ մշտադիտարկման, դրանց որակի և ժամկետների վերահսկման, գետերի հուների մաքրման ուղղությամբ տարվող աշխատանքների, նախարարությունների ու այլ կազմակերպությունների, համայնքների հետ փոխգործակցության հարցերին, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, ավագանու նիստերի անցկացման և նրանց ու համայնքների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ հսկողության հարցերին: Քննարկվեց նաև Լոռու մարզի Մեծ Պարնու դպրոցի տարածքից հողի ապօրինի տեղափոխման, Մեդովկայի դպրոցի շինարարության ընթացքում հայտնաբերված թերությունները և այլ հարցեր:
2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանը ներկայացրեց Տաշիրի տարածաշրջանում աղետի հետևանքով ֆիզիկական անձանց և գյուղատնտեսությանը հասցված վնասների փոխհատուցման վերաբերյալ տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանը ներկայացրեց աղետի հետևանքով Ալավերդու տարածաշրջանում ֆիզիկական անձանց բնակարաններին և տրանսպորտային միջոցներին հասցված վնասների փոխհատուցման գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում իրականացված մոնիտորինգի և վերահսկողության վերաբերյալ տեղեկատվություն:
4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց անցած շաբաթվա ընթացքում վարչության կողմից բուժհաստատություններ իրականացված շրջայցերի և հանդիպումների վերաբերյալ, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրում երեխայի խնամքի հետ կապված քննարկման և հարցի լուծման վերաբերյալ տեղեկատվություն:
5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի հարցերի վարչության պետ Գ.Քարհանյանը ներկայացրեց Մեծ Պարնի և Մեդովկա համայնքների ուսումնական հաստատություններում առկա խնդիրների և դրանց վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվություն:
6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վ.Ղարսայանը ներկայացրեց քաղաքաշինության բնագավառում իրականացվող ամենօրյա հսկողության, մոնիտորինգի և տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկատվություն:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին՝

Համապատասխան անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել նախարարությունների, գերատեսչությունների և համայնքների ղեկավարների հետ աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին ու իրավաբանական անձանց պատճառված բոլոր տեսակի վնասների փոխհատուցման հետ կապված դիմումներին սահմանված կարգով ընթացք տալու ուղղությամբ և գործընթացն ավարտել մինչև 21.10.2024թ.:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

2.1 Տրված հանձնարարականների կատարման նկատմամբ դրսևորել անհրաժեշտ պատասխանատվություն և հետևողականություն: Հսկողություն իրականացնել գործառույթների կատարման նկատմամբ և յուրաքանչյուր երկուշաբթի պատրաստ լինել ներկայացնելու հաշվետվություն ըստ ոլորտների իրականացված աշխատանքների և խնդիրների լուծման ուղղությամբ:

2.2 Անհրաժեշտ հսկողություն սահմանել աշխատանքային կարգապահության կանոնների պահպանման նկատմամբ, անհրաժեշտության դեպքում նաև կիրառել անցագրային ռեժիմին ներկայացվող պահանջներ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին, մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

3.1 Մեկ անգամ ևս ուսումնասիրել և հետագայում ռիսկերը բացառելու նպատակով մոնիտորինգ անցկացնել մայիսի 25 - 26-ին տեղացած հորդառատ անձրևների հետևանքով գյուղատնտեսության ոլորտին հասցված վնասների չափի ճշգրտման վերաբերյալ :

3.2 Համայնքներից ստացված առաջարկությունների հիման վրա ներկայացնել գետերի հուների մաքրման աշխատանքների հետ կապված առաջարկներ:

3.3 Շրջայցեր իրականացնել Լոռու մարզի համայնքներում բերքահավաքի արդյունքներն ու տվյալներն ուսումնասիրելու, գյուղատնտեսության խնդիրներին լուծում տալու և դրանց վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին, մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանին՝

Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել համայնքների ավագանիների նիստերի կազմակերպման, ընդունվող իրավական ակտերի նախագծերի նկատմամբ վերահսկման գործընթացները: Անհրաժեշտության դեպքում մասնակցել համատեղ քննարկումների և ներկայացնել առաջարկություններ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի հարցերով վարչության պետ Գ.Քարհանյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Համատեղ ուսումնասիրություններ կատարել և ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ Մեծ Պարնի և Մեդովկա համայնքների, ինչպես նաև այլ դպրոցներում առաջացած խնդիրների և դրանց լուծման տարբերակների վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Անմիջական աշխատանքներ իրականացնել շինարարական կազմակերպությունների հետ տեղում՝ ծագած խնդիրները լուծելու և դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-10-16 17:36:47 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99